

Սառնակունք

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 120 կմ,
Հեռավորությունը Միսիան քաղաքից՝ 22 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2170 մ,
Կարգավիճակը՝ բարձր լեռնային,

Գյուղը հիմնադրվել է 20-րդ դարի 30-ական թվականներին: Գյուղի հիմնական բնակիչները ղալաջուղցիներն են, որոնք թողնելով հին գյուղը ձորից բարձրացել և հարթության վրա հիմնել են նոր բնակավայր: Գյուղի պատմական հուշարձանների թվում ինքնատիպ են ժայռապատկերները (8-7-րդ դար մթա), ինչը լավագույն ապացույց է, որ տարածքը բնակեցված է եղել դեռևս հնադարյան մարդու կողմից:

Ժայռապատկերների վրա պատկերված է Հայաստանի ֆաունայի ողջ հարստությունը: 1945թ-ին հայտնաբերվում է նաև Սառնակունքի գանձը, հնագույն դրամների գանձ հավաքածուի մեջ կան նաև Տիգրան Մեծի և Արտավազդ Բ-ի ժամանակների դրամներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

- անասնապահությունը,

- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 12051 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 11649 հա, որից՝

- վարելահող՝ 1008 հա, խոտհարք՝ 365 հա, արոտ՝ 6069 հա, այլ հողատեսք՝ 4207 հա

- բնակավայրերի հողեր՝ 88 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 24 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 45 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 76 հա,

- անտառային հողեր՝ 137 հա, որից անտառածածկ՝ 137 հա

- ջրային հողեր՝ 32 հա